

**1929-30 ♂.**

# ԳՅՈՒՂՄՅԱՆՅԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11  
H

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՄԽՀ ՖԻՆՃԱՌԿՈՄԱՆԻ

ՏԵՐԵԴԱԿԱՆ

1929 F.

1.3  
10

ՄԻԱՅՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԴԻ  
ԱՐՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհրդագլուխ Խշանության գլխավոր նպատակներից մեկն և՝ նպաստավոր պայմաններ ստեղծել գյուղացիական չքավոր և միջակ տնտեսությունների ղարդառալու համար:

Բոլոր ասպարեզներում մեր կառավարությունը աշխատում է ոգնության գալ աշխատավոր գյուղացիության: Ամեն տարի Միասնական Գյուղատնտեսական հարկի որենքի մեջ մտցվում են այնպիսի փոփոխություններ, վորպեսզի՝ չքավոր գյուղացիությունը բարուվին ազատվի հարկից, միջակի հարկը քերեանա և հարկի գլխավոր ծանրությունն ընկերությունը ունենալու համար կուլակային տնտեսությունների վրա:

1929 թվին, հարկից ազատվող տնտեսությունների թիվը պետք է ավելանա: Գյուղմիասհարկի նոր որենքով յեկամտի չհարկվող մինիմումը բարձրացված ե՝ (այսինքն յեկամտի են ամենամեծ գումարը, վորը հարկից ազատվում ե):

Համեմատենք անցյալ և այս տարվա չհարկվող մինիմումները՝

ա) Անցյալ տարի հարկից ազատվում եյին մինչև 100 և յեկամուտ ունեցող 1 և 2 շնչից բազկացած տրնտեսությունները: Այս տարի այդպիսի տնտեսությունները (1 և 2 շունչ ունեցող) ազատվելու յեն հարկից, յեթե ունենան 110 ռուբ. յեկամուտից վոչ ավելի:

բ) Անցյալ տարի 3 և 4 շունչ ունեցող տնտեսությունները ազատվում եյին հարկից, յեթե նրանց յեկամուտը ավելի չեր 120 ռ.: Այս տարի այդպիսի տնտեսություններն ազատվելու յեն հարկից, յեթե նրանց յեկամուտը 130 ռուբ. ավելի չի լինի:

գ) 5 և ավելի շունչ ունեցող տնտեսությունները անցյալ տարի ազատվում եյին հարկից մինչև 130 ռուբ. յեկամուտ ունենալու դեպքում: Այս տարի այդպիսի տնտեսություններն ազատվելու յեն, յեթե նրանց յեկամուտը 150 ռուբլուց ավելի չի լինի:



Միւնույն ժամանակ անցյալ տարվա նման, այս տարի յել հարկ չպետք է վճարեն շնչին 20 ռուբլի յեկամուտ չունեցող տնտեսությունները.

Որինակ 1.—Տնտեսությունն ունի 5 շունչ, նրա յեկամուտը հավասար է 140 ռուբ. տնտեսությունն ազատվում է հարկից, վորովհետեւ յեկամուտը չի անցնում չհարկիող մինիմումից (այսինքն պակաս է 150 ռուբլուց):

Որինակ 2.—Տնտեսությունն ունի 210 ռուբ. յեկամուտ և բաղկացած է 12 շնչից, նա ազատվում է հարկից, վորովհետեւ շնչաղատկան յեկամուտը 20 ռուբլուց պակաս է:

Անցյալ տարի յեկամտի մինիմումով հարկից ազատվել են մոտ 75.000 տնտեսություն, (բոլոր տնտեսությունների 47%): 1929 թվին ազատվող տնտեսությունների թվիը ավելանալու յել և կհասնի մինչեւ 82.000-ի, այսինքն կկազմի բոլոր տնտեսությունների մոտ 55%:

Գյուղի չքաղոր և միջակ տնտեսությունների զարգանալուն նպաստելու և նրանց ոգնելու համար կառավարությունը վորոշել է տալ լայն արտօնություններ գյուղմիասնարկից:

Այս տարի և յեկող տարի հարկից ազատվելու յեն ցանքսերի ավելացած տարածությունները համեմատած անցյալ տարվա հետ:

Սա նշանակում է, վոր յեթե աշխատավոր գյուղացին 1928 թ. ցանել է 3 դեսյատին, իսկ այս տարի նա ցանի 5 դեսյատին, այսինքն ավելացնի իր ցանքոը 2 դեսյատինով, նրա այդ 2 դեսյատին ավելացած ցանքոը, ազատվելու յել հարկից 2 տարով:

Կամ յեթե այդ նույն գյուղացին յեկող 1930 թ. ցանի 7 դեսյատին 1928 թ. հետ համեմատած նրա 4 դեսյատին ավելացած ցանքոը նույնպես պետք է ազատվի հարկից:

Ուրեմն յերեւ աշխատավոր գյուղացին այս յերկու տարում նույնիսկ կրկնապատկի, կամ յեռապատկի իր ցանքոը, նրա հարկը պետք է հաշվվի անցյալ 1928 թվին արած ցանքսի համեմատ:

Այս արտօնությունը չի տարածվելու խաղողի և պտղատու այգիների վրա,

Այսպիսով ընդհանրապես վարելահողը, խոզան և խամ հողամասերը ոգտագործելու համար տրվում է մեծ հնարավորություն և գյուղացին այսուհետև ինքը պետք է շահագրգուված լինի ավելացնելու իր ցանքսի տարածությունը և ոգտագործի այդպիսի հողամասերը:

Մեզ մոտ Հայաստանում կան մեծ քանակությամբ վոչ պիտանի հողեր, վորոնց վրա վար ու ցանք անելը հնարավոր և միայն այն ժամանակ, յեթե գյուղացին այդ հողերի վրա թափի վորոշ աշխատանք, հողը խոնավացնի կամ կատարի այլ մելիորատիվ աշխատանք ներ:

Ահա այդպիսի վոչ պիտանի հողամասերը, մշակելի դարձնելու դեպքում, Յ տարի շարունակ պետք է ազատվեն հարկից:

Որինակ աշխատավոր գյուղացին իրեն հաշվով անցկացնի առուներ անհարմար հողամասերը ջրելու համար, կամ կատարի ուրիշ մելիորատիվ աշխատանք հողը պիտանի դարձնելու համար, նրա այդ հողի վրա կատարած ցանքսերն ազատվելու յեն հարկից յերեք տարի ժամանակով:

Այն հողերը, վորոնք ծածկված են լինում կտրտը ված անտառների կոճղերով, վորպեսզի այդ հողերը հարմարցնել ցանք անելու, կամ խոտհարքի համար, անհարմագություն է մաքրել կոճղերից: Յերբ գյուղացին կատարած ե լինում նման աշխատանք անցյալ տարում, նրա այդ հողամասը ազատվում է հարկից:

Որինակ՝ Վարդանլու գյուղացին վերցրել է անցյալ տարի մի հողամաս, վորտեղ առաջ անտառ և յեղել: Այդ հողամասի վրա մնացել են ծառերի կոճղերը (քոքերը): Գյուղացին հողը մաքրել է կոճղերից և հողը ցանել է: Նրա այդ հողի վրա արած ցանքսը ազատվում է հարկից:

Ոտար յերկրներում, որինակ Դանիայում կամ Հոլլանդիայում, անպետք, ավազոտ, ճահճային հողերը բարելավելուց և պարարտացնելուց հետո, հաջողվել է հասնել բերքատվության ամենամեծ արդյունքներին: Միջին թվով այնտեղ 1 դեսյատին հողից ստացվում է 200 ք. հացահատիկ, մինչ դեռ մեզ մոտ ստացվում է

60 փութ. (վորոշ տեղերում 130 փթից մինչև 150 փութ լով բերքի տարիներում) :

Պարզ է, վոր բերքատվությունը կարելի յեւ բարձրացնել միմիայն այն ժամանակ, յեթե գործադրվի թեհկուղ մի հասարկ միջոց հողը պարարտացնելու համար :

Վորպեսզի գյուղացիությունը չահագրգոված լինի բարձրացնել հողի բերքատվությունը և անտառների արդյունավետությունը, գյուհարկի նոր որենքը տալիս և արտօնություններ այն տնտեսություններին, վորոնք գործնականում կիրառեն բերքատվության բարձրաց-մանը նպաստող միջոցները :

Այդ միջոցները որանք են՝

### ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ .

Պարարտացման նպատակով գոմազը և հանքային պարարտանյութեր գործածելը, ինչպես նաև կանոչ պարարտացում կիրարկելը (արագությամբ աճող և հո-ղի ստորին չերափ նյութերը հավաքող խոտարույսեր ցանելը և հնձվածք հողի տակով անելը) :

### ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ .

Բազմազաշտային պարբերական ցանքաշրջանառու-թյան կիրարկումը, անասունների կերի (ցանովի խոտե-րի, արմատապտուղների և կերի ճակնդեղի համար գյուղի ընդհանուր հողերից առանձին հողամասեր հատ-կացնելը) :

### ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ .

Բարելավված մշակությունը՝ նոր և ավելի կատա-րելագործված գյուղատնտեսական գործիքների և մերե-նաների գործածությունը, գարնանացանի հողն աշնան վարելը, հողը վազ գարնան հերկելը, հերկված հողե-րում բակլային բույսեր (մաշ, լորի, բակլա, սիսեռ, վոսպ և այլն) ցանելը, սևահերկը, այսինքն՝ հողն աշ-նանը և կրկին գարնանը վարելն առաջիկա աշնանացանի համար, շարքացանը և շարքերով տնկելը, հողամասերի միջնահատների վոչնչացումը (յեթե նրանք զդալի տո-րածություն են բռնում) :

## ՀՈՂՈԳՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ .

Ճահիճների ցամաքեցումը, դաշտերը քարերից մաքրելը, ցրված հողամասերի միացումը, թախճաններ պատրաստելը, վնասուառուների (միջատներ, կենդանիներ և հիվանդություններ) և մոլախոտերի դեմ պայքարելը:

## ՄԱՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ .

Խոտհարքերը և արոտավայրերը քարերից մաքրելը՝ այդ տեղերի նպատակահարմար ոգտագործումը և չըծանեարեռնումը (արոտավայրերի յուրաքանչյուր դեսյատին տարածության վրա վորոշ քանակությամբ հոտեր արածացնելը, անասունների զանազան տեսակները և տռանձին խմբերը տարրեր տեղերում արածացնելը), խոտհարքներում և արոտավայրերում խոտեր ցանելը, փշախոտեր վոչնչացնելը և մացառներն արմատախիտ տնելը:

Յերբատվությունը բարձրացնող այս պարզ և հասարակ մեկ կամ մի քանի միջոցները կիրառող աշխատավոր տնտեսությունները, բացի այն ոգուտից, վորնրանք ստանալու յեն լավ բերքից ու լավ արդյունքից, պետք է ոգտվին և արտօնությունով գյուղմիասհարկից :

Յերե այդ միջոցները կիրառի ամբողջ համայնքը, այն ժամանակ յուրաքանչյուր տնտեսությանը հարկից զեղչվելու յե 10 տոկոս:

Յերե այդ միջոցները կիրառի վոչ թե համայնքը, այլ առանձին անհատ տնտեսությունը, նրա հարկից զեղչվելու յե 5 տոկոս:

Կուլակային տնտեսությունները այս արտօնություններով չեն ոգտվելու:

Որինակ գյուղի համայնքը, վորոշել ե իրեն վարելահողը պարարտացնել գոմաղբով և հողի մշակության ձեւը բարելավել: Յեթե բոլոր տնտեսությունները կիրառն այս յերկու բերքատվությունը բարձրացնող միջոցները, այն ժամանակ բոլոր աշխատավոր տնտեսությունների հարկից պետք է զեղչվի 10 տոկոս:

ՅԵՆԹԱԳՐԵՆՔ մի վորեւ գյուղում, մի աշխատավոր զյուղացի գործ և ածում հողը պարաբռացնելու միջոցներ, իսկ այդ գյուղի համայնքը նման բան չի անում: Այդ գյուղացու հարկից զեղջվելու յե 5 տոկոս:

Այս յերկու զեղջման չափերը (10 և 5 տոկ.) նշանակված ե տարրեր նրա համար, վորպեսզի գյուղի համայնքը կոլլեկտիվորեն գործադրի բերքատվությունը բարձրացնող միջոցները: Առանձին տնտեսությունների համար, մասնավանդ, չքավորների համար, մենակ կատարել այդ գործը դժվար է, իսկ ամրադի հասարակական ուժերով համեմատարար ավելի հեշտ կլինի:

Գյուղեարկից բոլորովին ազատվում ե մինչև կես գեսյատին փորձանական ցանքերը:

Յեթե գյուղացին ցանում է մինչև կես գեսյատին վորեւ բույս փորձելու համար, տեղի գյուղատնտեսի խորհրդով, այն ժամանակ նրա այդ փորձնական ցանքը ազատվում է հարկից:

Բազմադաշտային ցանքաշրջանառություն կիրառող գյուղացիների ցանքսերի յեկամտից զեղջվում ե 15 տոկոս:

Յեթե վորեւ տնտեսություն կիրառում ե բազմագաշտային ցանքսաշրջանառություն, այսինքն վորխանակ հողը մի տարի ցանել, իսկ մյուս տարին թողնել հերկի տակ, նա հերթով ցանում ե սկզբից ցորեն, հետո արմատապտուղ, հետո լորածաղիկ, հետո նորից հացատիկ և այնուհետև թողնում ե հողը հերկի տակ, այդ գյուղացու ցանքսի յեկամուտը պակասեցվելու յե 15 տոկ.: ՅԵՆԹԱԳՐԵՆՔ նրա ցանքի յեկամուտը հաշված է 100 ռ. այս գումարը իջեցվելու յե մինչև 85 ռուբլի:

Ցանովի խոտերի սերմաբուծարանները բոլորովին ազատվում են հարկից:

Աշխատավոր գյուղացին յեթե ցանում է խոտաբույժեր սերմացույի համար, նրա այդ ցանքած տարածությունը ազատվում է հարկից և միենույն ժամանակ նրա հարկից ինչպես արդեն ասված է, զեղջվում է 10 կամ 5 տոկոս:

Բամբակի, վուշի (կտավհատի) և շաքարի նակնեղի ցանքսերը հարկվում են արտօնված ձևով:

Բամբակի, վուշի և շաքարի ճակնդեղի մեկ դեսյատին ցանքսի յեկամուտը հաշվում ե ընդամենը 22 ռուբ. 50 կոպ.։ Անցյալ տարի յեղել ե նույն յեկամտի նորման և այս տարի մնում ե անփոփոխ։

Որինակ մի գյուղացի, վորի ընտանիքը 5 չնչից ե, անցյալ տարի ունեցել ե 3 գես. բամբակ, վորի յեկամտը հաշվվել ե ընդամենը 67 ռ. 50 կոպ. մյուս աղբյուրներից ստացված յեկամուտը կազմել ե 200 ռ. ընդամենը նրա յեկամուտը վորոշվել ե 267 ռ. 50 կոպեկ, այդ յեկամտի համապատասխան նա վճարել ե գյուղարկ 13 ռ. 95 կոպեկ։

Նա վճարել ե այդքան քիչ նրա համար, վորովհետեւ բամբակի յեկամուտը հաշվվում ե շատ պակաս չափով։

Յեթե նա ցաներ ցորեն, վորքան կլիներ նրա հարկը։ Դաշտավայրերում (արանում) ջրովի մեկ դեսյատին ցորենի յեկամուտը հաշվվում ե միջինը 110 ռ.։ Յերեք գեսյատին ցորենի յեկամուտը պետք ե կազմեր 330 ռ., իսկ ընդհանուր յեկամուտը 530 ռ. Հարկը պետք ե վճարեր 77 ռ. 91 կոպեկ—մինչդեռ բամբակ ցանելով։ Նա վճարում ե միայն 13 ռ. 95 կոպեկ։

Այս որինակից յերեւում ե, վոր բամբակ ցանողը 2 տեսակի ոգուտ և ստանում։ Առաջինը նրա յեկամուտն ե ավելանում, վորովհետեւ հայտնի յե, վոր բամբակի մեկ դեսյատինը տալիս ե միջին հաշվով 200 ռ., իսկ յերկրորդը՝ հարկը պակասում ե։

Բացի այդ, նոր տեղերում ցանվող բամբակը բոլորովին ազատվում ե հարկից հինգ տարի անընդհատ։

Գյուղատնտեսական հատուկ նյուղերը գարգացնելու համար հարկից ազատվելու յեն բոլոր նոր տնկած այգիները և պտղատու ծառատանները, մինչև բերք ստանալու յերկրորդ տարին։

Սա նշանակում ե, վոր նոր տնկած այգիները հարկի յեն յենթարկվում միայն պտղաբերության յերկրորդ տարվանից։

Որինակ՝ աշխատավոր գյուղացին տնկել ե նոր այգի և այս տարվանից նա սկսելու յերերք ստանալ։ Նրա այդ այգին պետք ե աղատվի հարկից։ Միայն յեկող

**տարի, նա այդ այգու յեկամուտից պետք է վճարի Հարկ:**

Եթամապահությունը զարգացնելու համար, ոյդ զբաղմութից ստացվող յեկամուտը ազատվում է հարկից:

Այս նպատակով հարկից ազատվում են նույնապես բոլոր քրենու տնկարանները:

Թուչնաբուծությունը ազատվում է հարկից բոլոյնվիճ:

**Հ.Ս.Խ.Հ.** Ժողկոմխորհը վորոշել է Վարանցովկայի, Ստեփանավանի և Ղզլ-դոչի գավառակներում այս տարի կովերի և ցուլերի յեկամուտը իջեցնել 50 տոկոսով, վորովիետև այդ գավառակներում զարգացած է արդյունաբերական յուղագործությունը:

Ուրեմն, յեթե 1928 թվին մեկ կովի յեկամուտը վորոշվել է 24 ռուբլի, այս տարվանից դրա յեկամուտը պետք է հաշվի 12 ռ.:

Այս արտոնությունը ժողկոմխորհի առանձին վորոշումով, կարող է տարածվել և ուրիշ շրջանների վրա, յեթե դրանք ճանաչվեն վորապես արդյունաբերական յուղագործական շրջաններ:

Վերոհիշյալ արտոնությունը սահմանվել է անասնապահ տնտեսություններին խրախուսելու և յուղագործական արդյունաբերությունը զարգացնելու նպատակով:

Երա պատճառով աւդիտիսի վարեւում ցանօթի խոտերի յեկամութի նորման պիտի է լինի խոսհարքի նորմայի չափով:

Հարկից բոլորավիճ ազատվում են հողային մարմինների հավանությունը գտած ցուլերը և հովատակները (վորձ ձիյերը): Բեղմնավորման համար կարենոր և ունենալ ազնվացեղ ցուլեր և հովատակներ: Յեթե հողային մարմինները հավանություն են տալիս վորեւե տնտեսության պատկանող այդ կենդանիններին, դրանց յեկամուտը ազատվում է հարկից:

Հայաստանում էից ե տարածված մերինսոփ վոչ-խարների պահելը։ Վորպեսզի զարգացնել այդ տեսակի անասնապահությունը, մինչև 250 գլուխ ունեցող տնհատ տնտեսությունների մերինոսի վոչխարների յեկամուտը ազատվում ե գյուղ հարկից։

Յեթե գյուղացին ունենա 250 գլուխց վոչ ավել մերինոսի վոչխարներ, գրանք ազատվելու յեն հարկից, իսկ կոլեկտիվ-անտեսություններին պատկանող այդ վոչխարները, անկախ գրանց քանակից, բոլորովին ազատվում են հարկից։

Գյուղական կոլեկտիվ տնտեսությունները ոգտըվում են ավելի մեծ արտոնություններով, քանի թե անհատ տնտեսությունները։

Այդ տնտեսությունների հարկը հաշվում ե արտոնված ձևով, իսկ հարկից զեղչվում ե 25-ից մինչև 60 տոկոսը։

Կոլեկտիվ անտեսությունների և կոմմունաների հարկը վորոշվում ե վոչ թե նրանց ընդհանուր յեկամուտի համապատասխան, այլ տնտեսության մեկ շնչին ընկնող յեկամուտի համեմատ։

Յեթե կոլեկտիվի շնչին ընկնող յեկամուտը 30 ռ. չի անցնում, տնտեսությունը ազատվում ե հարկից։

Կոլեկտիվ անտեսությունների հարկի զումարից կատարվում են հետեւյալ զեղչերը։

1. Այն գեպքերաւմ, յերբ մեկ շնչին ընկնող յեկամուտը ավելի պակաս ե, քան թե գավառուի միջին շնչապատկան յեկամուտը, կոլեկտիվի հարկից զեղչվում ե 40 տոկ., իսկ կոմմունայի հարկից 60 տոկ.։

Սա նշանակում ե, վոր կոլ. տնտեսության կամ կոմմունայի համար զեղչի չափը, վորոշելու համար, սկզբից պետք ե պարզվի, թե վորքան ե կազմում զավառի անհատ տնտեսությունների մեկ շնչին ընկնող միջին յեկամուտը։

Յենթադրենք՝ Մեղքի գավառում անհատ տնտեսությունները ունեն 7.929 շունչ և այդ տնտեսությունների ընդհանուր յեկամուտը հավասար ե 325.537 ռ.։ Մեկ շնչին ընկնող յեկամուտը հավասար ե 325537 : 7929 հավասար ե 41 ռ.։

Յենթագրենք՝ Մեղրիի գավառում կորանտեսության շնչապատկան յեկամուտը լինի՝ զցենք 35 սուրլի, նրա հարկից պետք է զեղչվի 40 տոկ.։

Կոմմունայի հարկից այդպիսի գեղքերում զեղչվում է 60 տոկոս։

2. Այն գեղքերում, յերբ կոլ. անտեսության կամ կոմմունայի շնչապատկան յեկամուտը ավելի յե, քան թե գավառուի միջինը, այն ժամանակ զեղչվում է կոլ. անտեսության հարկից 25 տոկոս, իսկ կոմմունայի հարկից 30 տոկ.։ Միենաւը ժամանակ սրանց հարկը հաշվվում է գավառուի շնչին ընկնող միջին յեկամության մասաւ։

Վերցնենք առաջին որինակը։ Մեղրու գավառի միջին շնչապատկան յեկամուտը հավասար եր 41 ռ.։ Յենթագրենք, վոր նույն գավառում մեկ ուրիշ կոյ. անտեսության շնչապատկան յեկամուտը կազմում է 65 սուրլի։ Այս դեպքում հարկը հաշվելիս ընդունվում է վոչ թե 65 սուրլի շնչապատկան յեկամուտը, այլ միայն 41 ռ.։ և դրա համեմատ վորոշվում է հարկի գումարը։ Նման ձեռվ ստացված հարկից զեղչվում է կոլ. անտեսության համար 25 տոկոս, իսկ կոմմունայի համար 30 տոկոս։

Կոլեկտիվ տնտեսությունները ոգտվում են նաև այն բոլոր արտնություններով, վորոնք տրվում են անհատ գյուղացիներին։

Գյուղի չքավոր և միջակ տնտեսությունների հարկը բերևացնելու համար, այս տարլանից իջեցրած են տոկոսային հավելումները։ Անցյալ տարի վորոշված եր գյուղատեսությունից (ցանքից, անտառներից և այլն) սաացած յեկամուտի վրա կատարել տոկոսային հավելումներ այն բոլոր տնտեսություններում, վորոնց ընդհանուր յեկամուտը (գյուղատեսութեական և վոչ գյուղատեսութեական) յեկել է 300 ռ. ավելի։ Ինչո՞ւ համար եր այդ արվում, վորովհետեւ գյուղում, թե չքավորի, թե միջակի և թե ունեորի յեկամուտը հաշվվում է միատեսակ նորմաներով։ Մինչդեռ պարզ ե, վոր ունեորը ստանում է իրեն ցանքից և անտառներից ավելի յեկամուտ, քան չքավորը։

Յեզ գա հասկանալի յե։ Ունեորը ավելի լավ է մշա-

կում իր հողը, լավ ե պահում տնտեսունները, ժամանակին կեր ե պատրաստում։ Զքավորը այդ անելը դժվարանում է, տնտեսությունը թույլ լինելու պատճառով։

Ահա անտեսությունների յեկամուտների մեջ համաշխափությունն մտցնելու համար ստհմանված ե տոկոսային հավելումներ։

Որինակ վորեե մի գյուղացի ստանում ե գյուղական անտեսությունից 200 ռ., իսկ վոչ գյուղատնտեսությունից (կոչկակարությունից) 150 ռ. յեկամուտ, ընդամենը 350 ռ.։ Անցյալ տարի նրա 350 ռ. յեկամտի համեմատ—200 ռ. գյուղատնտեսական յեկամտին ամելացվում եր 5 տոկ., այսինքն 10 ռ.։

Այս տարվանից տոկոսային հավելումներ կատարվելու յեմիայն այն դեպքերում, յերեւ տնտեսության ընդհանուր յեկամուտը 500 ռ. ավել ե։

Բազմանդամ տնտեսությունների համար այս արտոնությունը ավելի ևս լայնացրած ե.

9-ից մինչև 10 շունչ ունեցող տնտեսությունների յեկամտի վրա տոկոսային հավելում կատարվում ե միայն այն ժամանակ, յեթե նրանց չնչին ընկնող յեկամուտը 60 ռուբլուց ավելի յե։ 11-ից 12 շունչ ունեցողների յեկամտին այդ հավելումը կատարվում ե այն դեպքում, յեթե չնչապատկան յեկամուտը 65 ռուբլուց ավելի յե, իսկ 13 և ավելի շունչ ունեցողների՝ յեթե 70 ռ. ամելի շնչապատկան յեկամուտ ունեն։

Ուրեմն, յեթե վորեե տնտեսություն ունենանույնիսկ 800 ռուբլի յեկամուտ, բայց բաղկացած լինի 14 չնչից, նրա գյուղատնտեսական յեկամտի վրա տոկոսային հավելում չպետք ե կատարմի։

Տոկոսային հավելումները պետք ե կատարվեն 5-10 տոկոսի չափով։ Հավելման գումարը վորոշվելու յեցուղատնտեսական յեկամտի համեմատ։

Անցյալ տարի տոկոսային հավելումների չափը յեղել ե 5-ից մինչև 25 տոկոս։

Կոլլեկտիվ տնտեսությունների և կոմմունաների համար տոկոսային հավելում չի կիրառվում։

Անկախ դրանից, վորոշված ե ընդհանրապես թերեւկացնել բազմանդամ տնտեսությունների հարկը։

**Վորապեսզի բազմանդամ** (շատ շունչ ունեցող) արեւ-  
աեսությունը միանգամայն ապահովված կերպով զար-  
դանա, այս ասրվանից նրա հարկից կատարվելու յի-  
շեղջեր։ Հարկի ծանրությունը քերեացնելու նպատա-  
կով 7-ից մինչև 8 շունչ ունեցող տնտեսությունների  
հարկից պետք է զեղջվի 5 տոկոս. 9-ից մինչև 10 շունչ  
ունեցողների հարկից պետք է զեղջվի 10 տոկոս և 11 և  
ավելի շունչ ունեցողների հարկից պետք է զեղջվի  
15 տոկոս։

**Այսպիսով,** յեթե անտեսության հարկ նշանակված  
լինի 80 ռուրլի և այդ անտեսությունը ունենա 10 շունչ,  
նա պետք է վճարի 80 ռուրլու փոխարեն 72 ռ. (10 տոկ.-  
զեղջ), կամ թե նա ունենա 12 շունչ, պետք է վճարի  
68 ռ. (15 տոկ. զեղջ)։

Կարմիր բանակայինների, Միացյալ Պետ. Քաղաքար-  
չության գորամասերում և պահակախմբերում ծառա-  
յալների, պահեստում գոնվող զինապարտների և հաշմ-  
անդամներին անցյալ տարում տրվող արտօնությունները  
տրվելու յեն նույնպես և այս տարի։

Կարմիր բանակայիններ են հաշվվելու նաև այս  
ասրվա աշնանը զորակոչվածները և նրանց անտեսու-  
թյուններին արվելու յեն արտօնություններ։

Նույնպիսի արտօնությունով ոգտվում են առաջին,  
յերկրորդ և յերրորդ հաշմանդամության խմբերին  
պատկանող՝ պատերազմի, աշխատանքի և այլ հաշմ-  
անդամները։

**Աշխատանքի և այլ հաշմանդամներին արվում է ար-**  
**տօնություն այն գեղքում,** յեթե նրանք չունեն վոչ աշ-  
խատավորական յեկամտի աղբյուրներ (որինակ՝ յեկա-  
մուտներ առեւտրից, գնումներից, մեծ ջրաղացից և  
այլն)։

Տարբերային աղետներից (կարկտահարությունից,  
յերաշտից, անասունների ժանտախտից, երդեհից, ըն-  
տանիքի միակ աշխատավորի ծանը հիվանդության,  
մակվան և այլն) տուժած տնտեսությունները իրավունք  
ունեն ստանալ արտօնություններ։ Նրանց գիմումների

Համաձայն չըջանային հարկային հանձնաժողովները զիջում են հարկը լրիվ կամ մասնակի չափով։ Զիջումները կատարելու ժամանակ հաշվի յե առնվում, թէ վորքան և վնասվել տնտեսությունը այս կամ այն աղետից, վորքան և նա տնտեսապես ապահովված և նրա կարողության համեմատ հարկ։ Հանձնաժողովները վորոշում են զիջվող գումարի չափը։

Սպանված անտառային աշխատավորների այրիների և յերեխաների աշխատավոր տնտեսությունները ազատվում են հարկից 5 տարով։

Վորք յերեխաներին խնամող և մանկատների սաներին գյուղատնտեսական աշխատանքների համար պատրաստող տնտեսությունները արտոնվում են։

Յեթե գյուղացին ընդունում է իրեն խնամքի տակ վորք յերեխային, այն ժամանակ վորքը հաշվվում է վորպես նրա ընտանիքի անդամ։

Վորբին հատկացրած շնչարտկան հողաբաժինը ազատվում է հարկից յերեք տարով։ Յեթե վորբն ունի նաև անտուններ, դրանք նույնպես ազատվում են հարկից յերեք տարով։

Որինակ մի վորք ունի 2 գես. հող և 4 անասուն։ Նրան խնամում է մի գյուղացի, վորի հետ վորբը ապրում է միասին։ Վորբին պատկանող անասունները և հողը ազատվում են հարկից, իսկ վորբը հաշվվում է վորպես այդ գյուղացու ընտանիքի անդամ։

Ի հարկե այս արտօնությունը չի տրվի գյուղացուն, յեթե վորբը ապրի առանձին, իսկ գյուղացին կատարի միայն խնամակալի պարտականություն։

Տեղափախվող և վերաբնակվող տնտեսությունները ազատվում են հարկից մեկ տարուց մինչև հինգ տարի ժամանակով նույն կարգով ինչպես և անցյալ տարի։

Տեղափոխվող կոլեկտիվ տնտեսությունների համար այս արտոնությունները յերկարացվում են մեկ տարով։

Բանվորա-գյուղացիական կարմիր բանակից արձակվածները, յերք կազմակերպում են կոլ. տնտեսություն, կամ կոմմունա, նրանց տնտեսությունը ազատվում է հարկից յերկու տարով։

Այս արտօնությունը նրանց տրվում է միայն այն ժամանակի, յեթե ազատված բանակայինները կազմում են աշխատունակ տղամարդկանց կեսը և տնտեսությունը հիմնում են բանակից ազատվելու առաջին տարում։

Վարձու բանվորների աշխատանքով չոգտվող և հասարակության ուժերով հող մշակող բոլոր տեսակի ընկերությունները, յեթե ընկերության անդամները ունեն նույնպես և առանձին տնտեսություն, ոգտվում են արտոնությունով։ Ընկերության ստացված յեկամուխցանվում է այն մասը, վորը մնում է ընկերությանը։ Յեկամուխ մնացորդից դիջվում է 20 տոկոս, այս ձևով ստացված գումարը բաժանվում է ընկերության անդամների միջև։ Յուրաքանչյուր անդամին ընկած դումարը ավելացվում է նրա տնտեսության յեկամուխին և յենթարկվում հարկի։

Յուրեմն ամեն մեկ անդամի փաստորեն ստացված գումարը հարկվում է վոչ թե լրիմ չափով, այլ 20 տոկոս զեղջով, իսկ ընկերության մնացած յեկամուխը, վորը ծառայում է կազմակերպության կարիքներին, հարկից ազատվում է։

Արտոնություններ վոչ գյուղատնտեսական յեկամունքների նկատմամբ։

Գյուղատնտեսության բարձրացմանը խոչը չափով նպաստում են գյուղատնտեսական զանազան մեքենաների և գործիքների գործադրումը։

Վորպեսզի ել ավելի հնարավորություն տրվի տընտեսություններին զարգացնել և բարձրացնել բերքատվությունը, այս տարվանից բոլորովին ազատվում են գյուղատնտեսական հասարակ գործիքների յեկամունքները։

Հարկից այսպիսով ազատվում են քամհարների, սերմազտիչների, (տրիեր) խոտհար մեքենաների, սերգատների և այլ բոլոր տեսակի հասարակ գործիքների վարձով տալուց ստացվող յեկամունքները, մինչդեռ անցյալ տարի գրանք յենթարկվում եյին հարկի հաշվի առված յեկամուխ 70 տոկոսի չափով։

Գյուղատնտեսական բարդ գործիքներից ստացվող յեկամունքները պետք է յենթարկվեն հարկի միայն

տոկոսի չափով։ Խոկ մեքենայական շարժիչներով աշ-  
տող բարդ գործիքների յեկամուտները 25 տոկոսով։

Աւրեմն՝ յեթե տնտեսությունը ունի տրակտոր և  
լառու վարձով տալուց ստանում ե յենթագրենք  
ՀՀ ո., այդ յեկամակաց հարկվում ե միայն 25 տոկո-  
ս, այսինքն 50 ո.: Մնացորդ 150 ո. ազատվում ե հար-

Տնայնագործությունից և արհեստից ստացվող յե-  
մուտները հարկվում են դարձյալ մասնակի չափով,  
և վոչ թե լրիվ գումարով։

Անցյալ տարի տնայնագործների և արհեստավորնե-  
ն յեկամուտները հարկի ելին յենթարկվում 50 տոկոսի  
փոփ։ Այս տարվանից մենակ, կամ իրենց ընտանիքի  
անդամների պենությամբ աշխատող տնայնագործների  
մկամուտը պետք ե հարկվի միայն 35 տոկոսի չափով։

Վարձու բանվորների պենությամբ աշխատող տնայ-  
նագործների յեկամուտները պետք ե հարկվեն 40-ից  
մինչև 50 տոկոսի սահմաններում։

Սակայն, կան արհեստավորներից այնպիսիները,  
վորոնք աշխատում են ուրիշ աեղերում, տնտեսությու-  
նից գութք։ Պարզ է, վոր նրանք ունեն ավելորդ ծախսեր։  
Իրա համար դրսում աշխատող տնայնագործների յեկա-  
մուտը հարկի յե յենթարկվում ավելի պակաս՝ այն ե  
5 տոկոսով, մինչդեռ անցյալ տարի հարկվելիս ե յեպել  
յօ տոկոսով։

Յեթե արիեստավորը կամ տնայնագործը արտելի  
անդամ ե և չի ոգտվում վարձու բանվորի աշխատան-  
ենով, նրա յեկամակաց սկզբից զիջվում ե 25 տոկոս և ա-  
պա հարկի յե յենթարկվում մնացորդ յեկամականի մի մտսր  
վերը մատնանշված չափերով։


Աշխատավարձը անցյալ տարին ձևով հարկվում ե  
միայն 15 տոկոսով այն դեպքում, յեթե բանվոր կամ  
ծառայող ընտանիքի անդամը ապրում ե իր տնտեսու-  
թյան մեջ։ Յերբ նրա ծառայության տեղը գտնվում է  
դյուզից գուրու վայրերում և նա չի ապրում իր անտե-  
սության մեջ, չնայած այն բանին վոր նա իր տնտե-  
սությունից չի կտրված, այն ժամանակ հարկի յե  
կուրակային տնտեսություններն այս արտօնու-  
թյուններով չեն ոգտվում։

Ահա այն արտոնությունները, վորոնք տրվում են գյուղացիական անհատ և կոլլեկտիվ անտեսություններին:

Գյուղացիների անտեսական հաշիվների մեջ մեջնայունություն մտցնելու նպատակով, այս տարվա համար վորոշված ցանքսերի, խոտհարքների և անաստններ նորմաները պետք են անփոփոխ, յերեք տարի չը բունակ:

Յեթե ավյալ գյուղում, յենթադրենք հայտարարվել ե՝ ցանքերի նորման 45 ռ., խոտհարքների նորման 12 ռ., խոչը անտեսունների նորման 15 ռուբլի, այդ նորմանները 1929, 1930, և 1931 թվերին չեն փոփոխվելու: Զի փոփոխվելու նույնականացնելու հարկը հաշվելու կարգը և ձեզ:

Այսուհետեւ գյուղացին լիովին հնարավորություն ունի նախապես հաշվի առնել իր հարկի չափը: Նա կարող է սպարզ վորոշի, թե ինչ ձեռվ պետք ե զարգացնի իր անտեսությունը: Նա պետք է միենույն ժամանակ և գիտակցի, վոր Խորհրդային իշխանությունը ամեն կերպ աշխատում է ստեղծել նպաստավոր պայմաններ չքավոր և միջակ գյուղացու համար, վորպեսզի նրանք լայնացնեն իրենց անտեսությունները:



## ՀԱՅՊՈԼԻԳԻՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գևոսկ · 3136 Գրատեպգլխվար · 2059 ռ. Տեղամատ 5000

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002625



[054.]

A-  
2406